**Արձանագրություն N 2**

«ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Գրասենյակային կահույքի մատակարարման)

ք. Երևան

30 հունիսի 2017թ.
ժամը՝ 09:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի
նախագահ՝ Ա.Գրիգորյան
քարտուղար՝ Վ. Պապիկյան
անդամներ՝ Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Գ.Սաքոյան, Ս.Չոբանյան

1. **<u>ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին</u>**

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա Գրասենյակային կահույքի մատակարարման մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակվել է <gnumner.am> կայքի գնանշման հարցում կատարելու ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև <www.armeps.am> էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են ք.Երևան Մ.Մկրտչյան 5 հասցեում, 2017 թվականի հունիսի 30-ին՝ ժամը 09:00-ին <www.armeps.am> էլեկտրոնային կայքի միջոցով:

գ.<www.armeps.am> կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | Ա/Ձ Գրիգոր Այվազյան | ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14, Հեռ. (055) 595010 |
| 2. | «Զորաշեն» ՍՊԸ | ք. Երևան, Աշտարակի խճ. 2 բ, հեռ. 055959585, 099415880 |
| 3. | «Ֆոտոն» ՍՊԸ | ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 14 շ., բն. 21, հեռ. 043109530 |
| 4. | «Սենդա» ՍՊԸ | ք. Երևան, Հ.Քոչարի 8/16, 010268480, 091416154 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0*

## 2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0*

## 3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0*

## 4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 «Սենդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև առկա է անհամապատասխանություն՝ մասնավորապես՝ տուժանքի մասին համաձայնագրի (հայտի ապահովում) 1-ին էջում բացակայում է ներկայացման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը: Միաժամանակ նաև հավելված 2.1-ում՝ տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին փաստաթղթում անձը հաստատող փաստաթղթի տեսակը լրացված չէ:

Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն՝ մասնավորապես, վճարման պահանջագրում բացակայում է հայտի ապահովման համար նախատեսված գումարը, որը պարտադիր լրացվում է մասնակցի կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի պահանջներով՝ գանհատող հանձնաժողովը որոշեց «Սենդա» ՍՊԸ-ի և Ա/Ձ Գրիգոր Այվազյանի կողմից ներկայացրած հայտերը գնահատել անբավարար և մերժել:

## 5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

| Չափաբաժնի համար | Ապրանքի անվանումը | Նախահաշվային գինը | Մասնակիցների առաջարկած գները՝ ՀՀ դրամ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ա/Ձ Գրիգոր Այվազյան | | «Ձորաշեն» ՍՊԸ | | «Ֆոտոն» ՍՊԸ | | «Սենդա» ՍՊԸ | |
| | | | Առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ն ներառյալ | Առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ն ներառյալ | Առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ն ներառյալ | Առանց ԱԱՀ-ի | ԱԱՀ-ն ներառյալ |
| 1 | Բազկաթոռ ղեկավարի | 2 000 000 | 2 250 000 | - | 1 620 830 | 1 944 996 | 2 156 000 | 2 587 200 | 2 250 000 | 2 700 000 |
| 2 | Բազկաթոռ, շարժական, կտորից | 1 600 000 | 2 000 000 | - | 1 226 665 | 1 471 998 | 2296666.67 | 2 756 000 | 1 600 000 | 1 920 000 |
| 3 | Չիրկիզվող պահարաններ | 240 000 | - | - | - | - | - | - | - | - |
| 4 | Շերտավա-րագույրներ | 1 800 000 | 2 100 000 | - | 1 462 500 | 1 755 000 | 874 250 | 1 049 100 | - | - |

*Ընդունել ի գիտություն նաև, որ 3-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվում է չկայացած ոչ մի հայտ չլինելու հիմքով:*

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

## 6 Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

6.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները՝ հանձնաժողովը **որոշեց՝**

ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Զորաշեն» ՍՊԸ-ին, իսկ 4-րդ չափաբաժնով՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Ֆոտոն» ՍՊԸ-ին, 4-րդ չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցնող ճաաչել «Զորաշեն» ՍՊԸ-ին:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատասխան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատաման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5 , դեմ-0***

## *7. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ*

*Հարցումներ չեն ստացվել:*

## *8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ*

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք.Երևան,Մ.Մկրտչյան 5, 910 սենյակ հասցեում, սույն արձանագրության 6-րդ կետի 6.2 կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտից հետո:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

Հանձնաժողովի

նախագահ՝ _____________________________ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ _____________________________ Վ.Պապիկյան

անդամներ՝ _____________________________ Ա.Մկրտչյան

_____________________________ Գ.Սիմոնյան

_____________________________ Գ.Սաքոյան

------------------------------------------------Ս.Չոբանյան